



ՍՈՎՈՐԱԿԱՆԷ ԴՈՒՐՍ ԶՄԵՌՆԱՑԻՆ ԵՂԱՆԱԿՔ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ են հետևեալ թուականք, յորս անսովոր եղանակով ամբողջացան և անվտանգ անցուղարձը :

547. Գաղղիոյ ամէն գետք այնպէս սառեցան որ կարելի եղաւ անոնց վրայէն համարձակ ու անվտանգ անցուղարձը :

608. Գաղղիոյ մեծ մասին մէջ բոլոր որթատունկը սառելով փնայան և մարան սաստկութենէն :

763. Սեաւ ծով երեսուն գրկաչափ խորութեամբ սառեցաւ, ու հալելով՝ կոստանդնուպոլսոյ պարսպաց մեծագոյն մաս մը փլաւ :

822. Երանրաբեռն սայլք՝ ամիս մը ամբողջ Սին գետին վրայէն կ'անցնէին :

974. Տարւոյս ձմեռնային եղանակը խիստ ծանր եղաւ. սառուցի վրայէն վոսփորի նեղուցը կ'անցնէին. ցրտի յաջորդեցին տարափոխիկ հիւանդութիւնք, որոց սով մ'ալ յաջորդելով, Գաղղիոյ բնակչաց երրորդ մաս մը մեռան :

1316. Փարիզի ամէն կամուրջ քանդեցան :

1364. Տարօրինակ ցրտութիւն : Հոռոմանոս գետ տասներհինգ ոտք թանձրութեամբ սառեցաւ :

1408. Մատոյցք փարիզու ամէն կամուրջներն քանդեցին տարին : Խորհրդարանին դատաւորաց դպիրք իմաց տուն թէ չեն կարող վնաս արձանագրութիւններն գրի առնուլ, գրչին ծայրը թանաքին սառելուն պատճառաւ, թէպէտ ենտաժ սենեակներն լաւ տաքցուցած են : Նորուեկիոյ ու Տանիմարքի մէջն եղած ծովը սառեցաւ :

1420. Մեծ մարդամահ ի փարիզ առ սաստկութեան ցրտոյ : Գիշատիչ կենդանիք ամէն կողմանէ հոն կը վազեն : Սեաւ ծով կը սառի :

1422. Քաջախն ու ազոխաջուր շտեմարանաց մէջ կը սառին, Դանուբ գետ ամբողջ երկու ամիս սառած կը մնայ, Աքաղաղաց բբուկք ցրտէն կը սառնին:

1432. Սառուցից վրայ Տանիմարքէն մինչ ի Շուես կ'երթան:

1434. Անընդհատ երեք ամիս սառոյցք ի փարիզ, Նոր ու սաստկոգոյն սառոյցք յապրիլի:

1444. Ի Հարաւային Գաղղիա առատ ձիւն, որ երեք ամիս կը ծածկէ զերկիրն:

1458. Քառասուն հազարք զօրաց կը բանակին սառած Դանուբ գետոյն վրայ:

1468. Բուրգոյնցի զօրականք կացնով կտրելով զգինի կը վաճառեն:

1503. Բանակ մը զօրաց՝ սառուցեալ փոյ գետին վրայէն կ'անցնին:

1507. Մարսէյի նաւահանգիստ կը սառի, Բազմաթիւ անձինք և անասունք ցրտէն կը մեռնին:

1544. Ի փարիզ կացնով գինին կը կտրեն, ու կտոր կտոր կը վաճառեն կշիռքով:

1550. Հարաւային Գաղղիոյ գետերուն վրայէն ծանրաբեռնեալ կառք կ'անցնին:

1586. Ռէյլի գիմաց զինուորք ցրտէն կը մեռնին: Փրովանսի ձիթաստանք կը չորնան:

1594. Ի Մարսէյ և ի վենետիկ կը սառի ծով:

1599. Սաստիկ ձմեռ ընդ ամենայն Եւրոպա: Գրեթէ բոլոր պտղատու ծառք կը փճանան:

1607. Հօտք ոչխարաց իրենց գոմին մէջ կը մեռնին ի ցրտոյ: Ծանրաբեռն սայլք Սենի վրայէն կ'անցնին:

1608. Որթատունկք բոլոր կը չորնան: Ի Գաղղիա եկեղեցեաց մէջ գինին կը սառի ի բաժակին, և հացք փոռնէն անմիջապէս դուրս հանուած ատեն:

1665. Ի փարիզ ցրտի աստիճանն կ'իջնէ ի 33⁰,5:

1683. Ահաւոր ցուրտ ի Թուրէն Գաղղիոյ: Ի չրվակայս Թուրքաղաքի՝ գիւղացի բնակչաց երբորդ մասը կը մեռնի ի ցրտոյ և ի սովոյ:

1694. Թամիզ գետ կը սառի տասնըմէկ մատնաչափ թանձր:

1709. Ժամանակակից ձմեռանց ամենէն դժնդակը. ցուրտը 23 աստիճանն կ'անցնի ի փարիզ. Միլեբերկաւանն, ինչպէս նաև Մանչ, կը սառնին: Ի Գաղղիա՝ ծառոց մեծ մասն կը փճանայ. շատ տեղ գինին տակառաց մէջ կը սառնի. եկեղեցեաց զանգակք զարնըւ լելու ատեն կը խորտակին:

1740. Տարօրինակ ցուրտ է Ռուսիա : Ի Պետրբուրգ սառուցէ պայատ մը կը շինեն, չորս կողմը նոյն նիւթէ սանդղք կը տեղադրեն ու կը յաջողին անոնցմէ ուսմք արձակել :

1795. Յրտոյ աստիճանն է փարիզ 23 և կէս աստիճան. Ներմաչափին գիւտէն է վեր ամենասաստիկն է քաղաքին : Սառոյցն քառասունուերկու օր կը տևէ անընդհատ : Հոլանտացւոց տորմիզը սառուցաց մէջ կը կապուի, և գաղղիական հեծելազօրաց ձեռք կ'իյնայ :

1830. Խիստ ձմեռն. 17 աստիճան է փարիզ, 28 է Միւլհաուզ և է Մարսէյլ : Գետերը կը սառնին : Բազմաթիւ մահուք մարդոյ և անասնոց :

1846. Ի փոնթարլիէ աստիճանն կը ցուցնէ 31,3, Ջերմաչափի գիւտէն ետքը է Գաղղիա տեսնուած ամենասաստիկ ցրտերէն մին :

1852. Եւրոպայի մէջ ընդհանրապէս ամէն ջրոց ընթացից սառիլը :

1870-71. Ցուրտ կարաձմեռն. 22 աստիճան յԱստեղաբաշխական դիտարանի, և 23 և կէս է Մոնսուրի. սակաւատև :

1879-80. Բարեխառնութեան աստիճանն խտազոյն քան է նախընթաց թուականի. Ներմաչափն է փարիզ 23 աստիճան զրոյէ վար : Գաղղիոյ ամէն գետերը, ինչպէս նաև կարոն, կը սառնին. բայց ցուրտը նուազ տևական :

1881. Միայն քանի մի օր անհանդուրժելի ցրտոյ, և Ներմաչափը աւելի ցած քան է 1879 :

1880-91. Վերջին ձմրանս սաստկութիւնը գեո. նոր է, և յիշատակը ամենուն մոտին մէջ :

